Գրիգորիսի» սալել է եկեղեցու յատակը։
Դրանից աւելի բարձր արձանագրութեամբ՝ ոմն «Սարգիս Երեւանայ (ո)րդի Մէհեվանա թոռն Մարեմորոյ» միաբանել է Հաւուց Թառին և իւր արդար ստացուած-



Պատկեր 6

Նկ. ակադեմիկ Ամիրնովի

Բլրի եկեղեցին (տե՛ս պատկ. 1). արեւմտա–հարաւային տեսարան.

քից «աւժանդակ» եղել «ի չինութի եկեղեցւոյ»։ Արդ, այս Մարեմառը հաղուագիւտ անունը կրկնուած է նաև մերձակայ Գեղարդայ վանքի Ս. Աստուածածնի արձանագրութիւնների մէջ, որ մի տեսակ ժողովածու է, կարծում ենք, ԺԲ. դարի կէսերից յետոյ Նուիրատուների արձանագրութիւնների, արտագրուած այստեղ 1258 թըւին քարայրի արեւմտեան պատի նորոգութեան ժամանակ. դոցանից մէկը թուագրուած է ՈԻԶ = 1177 ին, որով յայտնւում է, թէ Ստեփանոս Կուտակենցի Նուիրած Բարափաւղոցը «խառնեցաւ Մարեմորոյն մեծաւ աշխատութէ», այսինքն երկու Նըւիրատուների պարգեւած կալուածը խառ-